թրծած քարփիչից պատնէշ, դորանից յետոյ 360[1] քաղաք, որոնք ամայացան, երբ Բար-էլ Աբուար[2] շինուեցաւ։

Մադացոց երկիրը եւ հեռագոյն եւս կողոպուտի համար, բանակցեցին Հիւրկանաց (Վրաց) թագաւորի հետ. որովհետեւ նա կ՚իշխէր այն ճանապարհի վերայ, որ արքայն Աղեքսանդր հրամայեց երկաթէ դռներով փակել։ Երբ նա նոցա թոյլ տուեց անցանել, նոքա մեծ բազմութեամբ յարձակեցան Մադացոց վերայ, որոնք բնաւ այդ բանը չէին սպասում, եւ սկսեցին աւարի առնել բազմամարդ եւ ամենայն տեսակ խաշինքով առատ երկիրը, եւ ոչ ոք յանդգնեցաւ նոցա դիմադրել։ Պակոր, երկրի թագաւորը, թողնելով ամէն ինչ, երկիւղից ապաստանել էր անանց տեղերում, եւ հազիւ աջողեցաւ նորան 100 տաղանդով վերստին գնել նոցանից իւր գերուած կինը եւ հարճերը։ Այսպէս հեշտիւ, առանց դիմադրութեան հանդիպելու, Ալանք եկան մինչեւ Հայաստան ամէն ինչ աւարի առնելով։ Տրդատ՝ երկրի թագաւորը՝ ելաւ նոցա ընդդէմ եւ ճակատեց նոցա հետ, բայց քիչ էր մնացել, որ նա ինքն ողջանդամ գերի ընկնէր նոյն մարտում. որովհետեւ (թշնամիներից) մէկը պարանով բռնեց նորան եւ դէպի իրան քարշել կը պատրաստուէր, երբ նա արագ կտրեց պարանը սրով եւ ժամանակին ազրեցաւ։ Բայց Ալանք այս ճակատամարտից աւելի եւս չարացած ի կողոպուտ մատնեցին երկիրը եւ բազմաթիւ գերիներ աւարի հետ միասին տարան երկու տէրութիւններից իրանց աշխարհը։

1 *Արեւելեան զրոյցներում ցարդ մեծ դեր կը խաղան* 3, 7, 12 *եւ* 360 *թւերը, որոնք սերտ կապ ունին երկնային լուսատուների հնագոյն պաշտամունքի հետ. նոյն թւերը հանդէս են գալիս դեռ բաբելական առասպելներում։*

2 *Բառիս ստվորական գրութիւնն է* باب الابواب *(Դրանց Դուռն), որ է մեր մատենագրերի Պահակ Ճորայ կամ Հոնաց, Դուռն Խաղրայ։ Նոյնն է կերեւի* باب صول*, որ կը յիշէ* Ibn Khordadbeh = *Τζούς* (Procop.), *այժմեան Դերբենդ քաղաքն է, որ ցարդ Դարգին գաւառում Զուլէ կը կոչուի։ Արեւելեան աւանդութիւնք քաղաքի շինութիւնն կը վերագրեն Խոսրով Անուշիրւանին* (531—578)*. պարսպի լայնութիւնն թոյլ էր*